ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 10.08.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/188

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Ինտերէներգիա» ՍՊԸ-ի տնօրեն Հ. Եսայանի (պետական գրանցման համար՝ 290.110.04041),

Մասնակցությամբ՝ «Ինտերէներգիա» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Հ. Ենգոյանի (լիազորագիր՝ տրված 26.07.2021թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 12.07.2021թ. թիվ 26/26-1/11216-2021 գրությամբ «Ինտերէներգիա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) 08.07.2021թ. թիվ 08.1//14733-2021 գրության հիման վրա, 12.07.2021թ. թիվ 26/26-1/11216-2021 գրությամբ նախաձեռնել

է «Ինտերէներգիա» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Ինտերէներգիա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Ինտերէներգիա» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«ԻՆՏԵՐԷՆԵՐԳԻԱ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ՆԳ-2021/188 ընթացակարգի հիմքերի վերաբերյալ ներկայացվում են հետևյալ նկատառումները.

Գործի հակիրճ նկարագրությունը և բողոքի փաստերը

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կարիքների համար նախագծերի պատրաստման և ծախսերի գնահատման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-21/42» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԻՆՏԵՐԷՆԵՐԳԻԱ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.06.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 7.2 կետի համաձայն՝ «ԻՆՏԵՐԷՆԵՐԳԻԱ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝

- Հավելված 1.1-ով ներկայացված տեղեկությունը չի համապատասխանում ՀՀ կառավարության 01.04.2021թ. թիվ 442-Ն որոշմամբ սահմանված պայմաններին, հաշվի առնելով, որ օգտագործվելիք նյութերը պետք է լինեն հայաստանյան ծագում ունեցող,

- առաջարկվող աշխատակազմի մասին տեղեկանքով ներկայացված մասնագետների մասին տեղեկատվությունը չի համապատասխանում կից ներկայացված մասնագետների որակավորումը հավաստող փաստաթղթերին, ինչպես նաև հրավերով սահմանված պահանջներին,

-աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները տրված են նախքան մրցույթի հրապարկվելը,

-խախտված է 20.04.2020թ. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի հետ կնքված թիվ TPD-33 պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման ժամկետները, ինչը չիկարող գնահատվել որպես պատշաճ կատարված:

Արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից «ԻՆՏԵՐԷՆԵՐԳԻԱ» ՍՊԸ-ին տրամադրվել է 1 աշխատանքային օր ժամկետ՝ անհամապատասխանությունը շտկելու համար:

Ընկերությունը սահմանված կարգով և ժամկետներում ներկայացրել է հետևյալ պարզաբանումը.

«1. Հավելված 1.1-ով ներկայացված տեղեկությունը չի համապատասխանում ՀՀ կառավարության 01.04.2021թ. թիվ 442-Ն որոշմամբ սահմանված պայմաններին, հաշվի առնելով, որ օգտագործվելիք նյութերը պետք է լինեն հայաստանյան ծագում ունեցող.

Պատասխան՝ Նախագծային աշխատանքներում հիմնականում օգտագործվում է մտավոր աշխատանքը, որը կազմում է ծառայության մատուցման մինչև 90 տոկոսը: Մնացած 10 տոկոսը՝ օգտագործվում է թուղթ, կազմարարական նյութեր, քաթրիջ վառելիք՝ բենզին և այլն, որոնք Հայաստանում չեն արտադրվում, ու չի կարող լինի 50 տոկոս:

2. Առաջարկվող աշխատակազմի մասին տեղեկանքով ներկայացված մասնագետների մասին տեղեկատվությունը չի համապատասխանում կից ներկայացված մասնագետների որակավորումը հավաստող փաստաթղթերին, ինչպես նաև հրավերով սահմանված պահանջներին:

Պատասխան՝ համապատասխանում է:

3. Աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները տրված են նախքան մրցույթի հրապարկվելը:

Պատասխան՝ մինչև «ՀՀ ԿԳՄՍՆԳՀԾՁԲ-21/42» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ հայտարարելը եղել է «ՀՀ ԿԳՄՍՆԳՀԾՁԲ-21/41» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը, որին մեր ընկերությունը պատրաստվել է, և հենց այդ ժամանակ էլ պատրաստվել են համաձայնագրերը: Աշխատակիցները տվել են իրենց համաձայնությունները Լոռու մարզի թվով 18 դպրոցների վերանորոգման աշխատանքների մասնակցության վերաբերյալ: Հետագայում փոխելենք ծածկագրերը, իսկ ամսաթիվը մնացել է նույնը:

4. Խախտված է 20.04.2020թ. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի հետ կնքված թիվ TPD-33 պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման ժամկետները, ինչը չի կարող գնահատվել որպես պատշաճ կատարված:

Պատասխան՝ աշխատանքը սահմանված ժամկետից շուտ, պատշաճ կերպով ներկայացվել է հիմնադրամ: Հիմնադրամը պետք է իրականացներ նախագծանախահաշվային փաստաթղթերի քննությունը, որի համար սահմանված կարգով սկսել է գնման գործընթաց: Այնուհետև մեզ բոլորիս հայտնի պատճառներով ձգձգվել է փորձաքննության գործընթացը: Ընդունում հանձնումը կատարվել է փորձաքննության եզրակացությունը պատրաստ լինելուն պես: Ընկերությունը ոչ մի կապ չունի ուշացումների հետ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ սահմանված ժամկետում «ԻՆՏԵՐԷՆԵՐԳԻԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է պարզաբանում, սակայն չեն ներկայացվել փաստաթղթերը: Արդունքում գնահատող հանձնաժողովը որոշել է «ԻՆՏԵՐԷՆԵՐԳԻԱ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

Գործի իրավական հիմքերը և հիմնավորումները.

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված

պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 26-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի անդամը պատասխանատվություն է կրում իր որոշումների, այդ թվում՝ իր կողմից հաստատված փաստաթղթերի, պահանջների, ինչպես նաև գնման ընթացակարգի հաղթողին որոշելու հիմնավորվածության համար:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 46-րդ կետի համաձայն՝ կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է սույն կարգի 32-րդ կետի 22-րդ ենթակետով սահմանված ժամկետներում: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում

հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ աստեղ առկա են գնահատող հանձնաժողովի կողմից թույլ տված մի շարք խախտումներ, մասնավորապես, կամ պահանջված շտկումները եղել են ոչ իրավաչափ և չեն բխել Ընթացակարգի հրավերի պահանջներից կամ եղել են անորոշ, չհստակեցրած և վերացական: Վերոհիշյալն էլ իր հերթին ոչ իրավաչափորեն հանգեցրել է տվյալ մասնակցի համար գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու վտանգ: Մասնավորապես.

Ինչպես արդեն հայտնել ենք՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կարիքների համար նախագծերի պատրաստման և ծախսերի գնահատման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԿԳՄՍՆԳՀԾՁԲ-21/42» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԻՆՏԵՐԷՆԵՐԳԻԱ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.06.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 7.2 կետի համաձայն՝ «ԻՆՏԵՐԷՆԵՐԳԻԱ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝

- Հավելված 1.1-ով ներկայացված տեղեկությունը չի համապատասխանում ՀՀ կառավարության 01.04.2021թ. թիվ 442-Ն որոշմամբ սահմանված պայմաններին, հաշվի առնելով, որ օգտագործվելիք նյութերը պետք է լինեն հայաստանյան ծագում ունեցող,

- առաջարկվող աշխատակազմի մասին տեղեկանքով ներկայացված մասնագետների մասին տեղեկատվությունը չի համապատասխանում կից ներկայացված մասնագետների որակավորումը հավաստող փաստաթղթերին, ինչպես նաև հրավերով սահմանված պահանջներին,

-աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները տրված են նախքան մրցույթի հրապարկվելը,

- խախտված է 20.04.2020թ. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի հետ կնքված թիվ TPD-33 պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման ժամկետները, ինչը չի կարող գնահատվել որպես պատշաճ կատարված:

Արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից «ԻՆՏԵՐԷՆԵՐԳԻԱ» ՍՊԸ-ին տրամադրվել է 1 աշխատանքային օր ժամկետ՝ անհամապատասխանությունը շտկելու համար:

Ընկերությունը սահմանված կարգով և ժամկետներում ներկայացրել է վերոշարադրված պարզաբանումը, սակայն այն չի ընդունվել գնահատող հանձնաժողովի կողմից, և մասնակցի հայտը մերժվել է:

Այսպես, գնահատող հանձնաժողովը արձանագրել է հետևյալ թերությունները.

1. Հավելված 1.1-ով ներկայացված տեղեկությունը չի համապատասխանում ՀՀ կառավարության 01.04.2021թ. թիվ 442-Ն որոշմամբ սահմանված պայմաններին, հաշվի առնելով, որ օգտագործվելիք նյութերը պետք է լինեն հայաստանյան ծագում ունեցող.

Գտնում ենք, որ գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված նշված անհամապատասխանությունը լիովին անհիմն է, քանի որ Ընկերության կողմից ներկայացվել է Հրավերով նախատեսված Հավելված 1.1-ի օրինակելի ձևին համապատասխան Հավելված 1.1, բացի այդ, նախագծային աշխատանքներում հիմնականում օգտագործվում է մտավոր աշխատանքը, որը կազմում է ծառայության մատուցման մինչև 90 տոկոսը: Մնացած 10 տոկոսը՝ օգտագործվում է թուղթ, կազմարարական նյութեր, քաթրիջ վառելիք՝ բենզին և այլն որոնք Հայաստանում չեն արտադրվում: Ուստի գտնում ենք, որ արձանագրված անհամապատասխանությունը լիովին անհին է: Այս մասին իր տրված պարզաբանմամբ Ընկերությունը նաև հայտնել է գնահատող հանձնաժողովին:

Միևնույն ժամանակ, բողոքներ քննող անձին խնդրում ենք հաշվի առնել, որ այս կետով արձանագրված անհամապատասխանությունը նաև անորոշ է, ոչ հստակ և վերացական, և չի բավարարում Կարգի 29-րդ և 46-րդ կետի պահանջներին, ինչի արդյունքում անկիայտորեն խախտվել է իրավական որոշակիության և կանխատեսելիության սահմանադրական սկզբունքները (այդ մասին ավելի մանրամասն տե՛ս՝ ՀՀ Սահմանադրական դատարանի 18.04.2006թ. թիվ ՍԴՈ-630, 15.01.2008թ. թիվ ՍԴՈ-723 և 29.01.2008թ. թիվ ՍԴՈ-731 որոշումները:

2. Առաջարկվող աշխատակազմի մասին տեղեկանքով ներկայացված մասնագետների մասին տեղեկատվությունը չի համապատասխանում կից ներկայացված մասնագետների որակավորումը հավաստող փաստաթղթերին, ինչպես նաև հրավերով սահմանված պահանջներին:

Այս կապակցությամբ Ընկերությունը հայտնել է գնահատող հանձնաժողովին, որ դրանք համապատասխանում են:

Միևնույն ժամանակ բողոքներ քննող անձին խնդրում են նկատի ունենալ, որ գնահատող հանձնաժողովը չի պահպանել Կարգի 41-րդ և 46-րդ կետի պահանջները, որը սահմանում է, որ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ, ինչպես նաև մասնակցի ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները: Մինչդեռ ուսումնասիրելով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատող հանձնաժողովի 25.06.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 7.2 կետը, ինչպես նաև այս մասով արձանագրված անհամապատասխանությունը և պահանջված շտկումը, պարզ է դառնում, որ գնահատող հանձնաժողովը ընդհանրապես չի նկարագրել արձանագրված անհամապատասխանությունը, այլ ընդամենը վերացական նշել է, որ առաջարկվող աշխատակազմի մասին տեղեկանքով ներկայացված մասնագետների մասին տեղեկատվությունը չի համապատասխանում կից ներկայացված մասնագետների որակավորումը հավաստող փաստաթղթերին, սակայն որն է թերությունը, ինչով չի համապատասխանում, և մասնակիցը ինչ պետք է շտկի, մնում է անհայտ:

Ուստի այս կետով ևս գտնում ենք, որ արձանագրված անհամապատասխանությունը լիովին անհին է և խախտում նաև իրավական որոշակիության և կանխատեսելիության սահմանադրական սկզբունքները:

3. Աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները տրված են նախքան մրցույթի հրապարկվելը:

Այս կետի վերաբերյալ ցանկանում ենք նշել, որ Հրավերով նախատեսված է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հրավերով սահմանված առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ մատուցվող ծառայություններում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչը տվյալ դեպքում ՍՊԸ-ի կողմից հստակ կատարվել է և տրված համաձայնությունների մեջ հստակ նշված է տվյալ Ընթացակարգի ծածկագիրը, որին համաձայն են մասնակցելու մասնագետները, և տվյալ պարագայում այդ համաձայնության վրա կարող էր ընդհանրապես դրված չլիներ ամսաթիվ, և դա տվյալ համաձայնությունը անվավեր չեր դարձնում՝ Ընթացակարգի ծածկագիրը հստակ նշելու պայմաններում:

4. Խախտված է 20.04.2020թ. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի հետ կնքված թիվ TPD-33 պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման ժամկետները, ինչը չի կարող գնահատվել որպես պատշաճ կատարված:

Այս կապացությամբ Ընկերությունը ներկայացրել էր պարզաբանում, որ աշխատանքը սահմանված ժամկետից շուտ, պատշաճ կերպով ներկայացվել է հիմնադրամ: Հիմնադրամը պետք է իրականացներ նախագծանախահաշվային փաստաթղթերի քննությունը, որի համար սահմանված կարգով սկսել է գնման գործընթաց: Այնուհետև մեզ բոլորիս հայտնի պատճառներով ձգձգվել է փորձաքննության գործընթացը: Ընդունում հանձնումըկատարվել է փորձաքննության եզրակացությունը պատրաստլինելուն պես: Ընկերությունը ոչ մի կապ չունի ուշացումների հետ:

Բացի այդ, եթե ներկայացված պայմանագրով առկա են հանձնման-ընդունման արձանագրություններ, ապա վերոհիշյալը վկայում է, որ տվյալ պայմանագիրը կատարվել և ավարտվել է, իսկ պատվիրատուն չի լուծել նշված պայմանագիրը՝ այն ոչ պատշաճ կատարելու հիմքով: Իսկ նման պարագայում Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի հետ 20.04.2020թ. կնքված թիվ TPD-33 պայմանագիրը չի կարող դիտարկվել որպես անպատշաճ, քանի որ անպատշաճ կատարումը պայմանագրի ուժով հանգեցնում է դրա միակողմանի լուծմանը:

Տվյալ պարագայում Ձեր ուշադրությունն են ցանկանում հրավիրել այն փաստի վրա, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից անհապատասխանություններ արձանագրվելուց հետո Ընկերության կողմից ներկայացվել է պարզաբանում, սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը բավարար չի համարել այդ պարզաբանումը և մերժել է Ընկերության հայտը: Ինչն էլ իր հերթին հանգերել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվելու վտանգի առաջ:

Ի մի բերելով վերը նշված փաստերն ու փաստական հանգամանքները՝ գտնում ենք, որ «ԻՆՏԵՐԷՆԵՐԳԻԱ» ՍՊԸ-ի կողմից թույլ չի տրվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության որևէ խախտում, ուստի և առկա չեն «ԻՆՏԵՐԷՆԵՐԳԻԱ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում ենք «ԻՆՏԵՐԷՆԵՐԳԻԱ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության

խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

«Ինտերէներգիա» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/188 ընթացակարգի շրջանակներում 26.07.2021թ. ժամը 10:10-ին և 05.08.2021թ. ժամը 09:10-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, 05.08.2021թ. ժամը 09:10-ին հրավիրված նիստին տնօրենը, Ընկերության ներկայացուցիչը մասնակցել են և հայտնել վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. «ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 08.07.2021թ. թիվ 08.1//14733-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ նախարարության կողմից 2021 թվականի հունիսի 25-ին գնանշման հարցման ընթացակարգով «ՀՀԿԳՄՍՆԳՀԱԾՁԲ-21/42» ծածկագրով կազմակերպված նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման (ներառական կրթության համակարգի ներդրում) ծառայությունների գնման գործընթացին հայտ է ներկայացրել ««Ինտերէներգիա» ՍՊԸ-ն: Հաշվի առնելով, որ մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված չեն հրավերի պահանջներին համապատասխան՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գնահատման գործընթացը կասեցվել է և 2021 թվականի հունիսի 29-ին «Ինտերէներգիա» ՍՊԸ-ին առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները, սակայն դրանք չեն շտկվել և վերջինիս հայտը մերժվել է:

Ելնելով վերոգրյալից՝ ստորև ներկայացնում եմ վերոնշյալ մասնակցի վերաբերյալ տվյալները և համապատասխան հիմքերը գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/188 ընթացակարգի շրջանակներում 26.07.2021թ. ժամը 10:10-ին և 05.08.2021թ. ժամը 09:10-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/188 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/188 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից իր կարիքների համար նախագծերի պատրաստման և ծախսերի գնահատման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀԿԳՄՍՆԳՀԱԾՁԲ-21/42» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ինտերէներգիա» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրության համաձայն՝ 29.06.2021թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ գնահատելով հայտում պահանջվող փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին և արձանագրել է, որ «Ինտերէներգիա» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝

- Հավելված 1.1-ով ներկայացված տեղեկությունը չի համապատասխանում ՀՀ կառավարության 01.04.2021թ. թիվ 442-Ն որոշմամբ սահմանված պայմաններին, հաշվի առնելով, որ օգտագործվելիք նյութերը պետք է լինեն հայաստանյան ծագում ունեցող,

- առաջարկվող աշխատակազմի մասին տեղեկանքով ներկայացված մասնագետների մասին տեղեկատվությունը չի համապատասխանում կից ներկայացված մասնագետների որակավորումը հավաստող փաստաթղթերին, ինչպես նաև հրավերով սահմանված պահանջներին,

-աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները տրված են նախքան մրցույթի հրապարկվելը,

-խախտված է 20.04.2020թ. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի հետ կնքված թիվ TPD-33 պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման ժամկետները, ինչը չի կարող գնահատվել որպես պատշաճ կատարված:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանը

առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 29.06.2021թ. ծանուցել է Ընկերությանը՝ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը շարունակելով նիստը՝ 02.07.2021թ. արձանագրել է, որ «Ինտերէներգիա» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է պարզաբանում, սակայն չեն ներկայացվել շտկված փաստաթղթեր և որոշում կայացրել վերջինիս հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 12.07.2021թ. թիվ 26/26-1/11216-2021 գրությունը, «ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 08.07.2021թ. թիվ 08.1//14733-2021 գրությունը՝ կից փաստաթղթերով, «Ինտերէներգիա» ՍՊԸ-ի գրությունը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ ***գնման գործընթացի շրջանակում սպանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից*** պայմանագրի միակողմանի լուծմանը ***կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,***

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից իր կարիքների համար նախագծերի պատրաստման և ծախսերի գնահատման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀԿԳՄՍՆԳՀԱԾՁԲ-21/42» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ինտերէներգիա» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրության համաձայն՝ 29.06.2021թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ գնահատելով հայտում պահանջվող փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին և արձանագրել է, որ «Ինտերէներգիա» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված

փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝

- Հավելված 1.1-ով ներկայացված տեղեկությունը չի համապատասխանում ՀՀ կառավարության 01.04.2021թ. թիվ 442-Ն որոշմամբ սահմանված պայմաններին, հաշվի առնելով, որ օգտագործվելիք նյութերը պետք է լինեն հայաստանյան ծագում ունեցող,

- առաջարկվող աշխատակազմի մասին տեղեկանքով ներկայացված մասնագետների մասին տեղեկատվությունը չի համապատասխանում կից ներկայացված մասնագետների որակավորումը հավաստող փաստաթղթերին, ինչպես նաև հրավերով սահմանված պահանջներին,

-աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները տրված են նախքան մրցույթի հրապարկվելը,

-խախտված է 20.04.2020թ. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի հետ կնքված թիվ TPD-33 պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման ժամկետները, ինչը չի կարող գնահատվել որպես պատշաճ կատարված:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանը առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 29.06.2021թ. ծանուցել է Ընկերությանը՝ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը շարունակելով նիստը՝ 02.07.2021թ. արձանագրել է, որ «Ինտերէներգիա» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է պարզաբանում, սակայն չեն ներկայացվել շտկված փաստաթղթեր և որոշում կայացրել վերջինիս հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

Այսպես, Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները:

Նույն մասի 5-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող աշխատանքային ռեսուրսներ:

Օրենքի նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ***հրավերով սահմանվում են մասնակցի՝ տվյալ գնումներին մասնակցելու*** իրավունքը և ***որակավորումը գնահատելու***

չափանիշները, կարգը և դրա համար պահանջվող փաստաթղթերին (տեղեկություններին) ներկայացվող պահանջները:

Այսպիսով՝ անդրադառնալով գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված հետևյալ անհամապատասխանությանը, այն է՝ *Հավելված 1.1-ով ներկայացված տեղեկությունը չի համապատասխանում ՀՀ կառավարության 01.04.2021թ. թիվ 442-Ն որոշմամբ սահմանված պայմաններին, հաշվի առնելով, որ օգտագործվելիք նյութերը* պետք է լինեն հայաստանյան ծագում ունեցող, սույն մասով հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

«Պետական գնումների ընթացակարգերում հակաճգնաժամային միջանկյալ մեխանիզմի կիրառման պայմանները սահմանելու մասին» ՀՀ կառավարության 01.04.2021թ. թիվ 442-Ն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի ա) պարբերությամբ սահմանվել է, որ գնման ընթացակարգի հրավերով (պայմանագրի նախագծով) նախատեսվում է նաև, որ եթե մասնակիցը տվյալ ընթացակարգի շրջանակում կնքվելիք պայմանագրով պարտավորվում է պայմանագիրը կատարելու ժամանակ, գնային առաջարկով ներկայացվող արժեքի ավելի քան 50 տոկոսը՝ հանրագումարային ձևով, ուղղել հայաստանյան ծագում ունեցող աշխատանքային և (կամ) արտադրական ռեսուրսների օգտագործման միջոցով պայմանագրի կատարմանը, ապա կնքվելիք պայմանագրով սահմանված պայմաններով վերջինիս փոխհատուցվում է պայմանագրի գնի 1 տոկոսը: Ընդ որում, սույն պարբերությամբ նախատեսված պայմանն ընդունելու դեպքում ***մասնակիցը հայտով ներկայացնում է պարտավորությունն ստանձնելու վերաբերյալ իր կողմից հաստատված հայտարարություն՝***

- աշխատանքների և ծառայությունների գնման դեպքում կցելով նաև օգտագործվելիք նյութերի ցանկը՝ անվանումների, գումարների և քանակների նշումով.

- նշելով նաև աշխատողների քանակը, որոնց միջոցով պետք է ապահովվի պայմանագրի կատարումը: ***Եթե հայտով ներկայացված հայտարարության գնահատման արդյունքում սույն ենթակետի պահանջների նկատմամբ արձանագրվում են անհամապատասխանություններ և <u>մասնակիցը գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետում չի շտկում այն, ապա մասնակցի հայտը չի մերժվում</u>*** և վերջինիս ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում կնքվող պայմանագրով չեն նախատեսվում գումարի փոխհատուցման հնարավորության պայմանները.

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 4.3-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանվել է, որ Մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ սույն ընթացակարգի շրջանակում կնքվելիք պայմանագիրը կատարելու ժամանակ, գնային առաջարկով ներկայացվող արժեքի ավելի քան 50 տոկոսը՝ հանրագումարային ձևով, հայաստանյան ծագում ունեցող աշխատանքային և (կամ) արտադրական ռեսուրսների օգտագործման միջոցով պայմանագրի կատարմանը ուղղելու պարտավորության վերաբերյալ (հավելված 1.1)՝ - նշելով նաև.

- աշխատողների քանակը, որոնց միջոցով պետք է ապահովվի պայմանագրի կատարումը,

- կցելով նաև օգտագործվելիք նյութերի ցանկը՝ անվանումների, գումարների և քանակների նշումով:

Ընթացակարգի հրավերի 2.2-րդ կետի 2.2.1-րդ ենթակետի համաձայն՝ Մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված սույն հրավերի 1-ին մասի 4.3 կետի 6-րդ ենթակետով նախատեսված՝ հայաստանյան ծագում ունեցող աշխատանքային և (կամ) արտադրական ռեսուրսների օգտագործման մասին հայտարարություն՝ համաձայն հավելված N 1.1-ի:

Ընթացակարգի հրավերի 8-րդ կետի 8.26-րդ ենթակետով սահմանվել է, որ սույն մասի 4.3 կետի 6-րդ ենթակետով նախատեսված պայմանի կիրառման դեպքում ***եթե հայտով ներկայացված հայտարարության գնահատման արդյունքում նշված ենթակետի պահանջների նկատմամբ արձանագրվում են անհամապատասխանություններ և մասնակիցը սույն մասի <u>8.9 կետով սահմանված ժամկետում չի շտկում այն, ապա մասնակցի հայտը չի մերժվում</u> և վերջինիս ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում կնքվող պայմանագրով չեն նախատեսվում գումարի փոխհատուցման հնարավորության պայմանները՝*** կնքվելիք պայմանագրից հանելով նախագծի 2.4.5, 2.4.6 և 4.3 կետերը և 1.1 հավելվածը:

Այսպիսով՝ վերը նշված կարգավորումների համաձայն՝ Մասնակիցը հայտով ներկայացնում է Հավելված N 1.1-ը՝ հայաստանյան ծագում ունեցող աշխատանքային և (կամ) արտադրական ռեսուրսների օգտագործման մասին հայտարարություն, միևնույն ժամանակ «Պետական գնումների ընթացակարգերում հակաճգնաժամային միջանկյալ մեխանիզմի կիրառման պայմանները սահմանելու մասին» ՀՀ կառավարության 01.04.2021թ. թիվ 442-Ն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի ա) պարբերությամբ և Ընթացակարգի հրավերի 8-րդ կետի 8.26-րդ ենթակետով սահմանվել է, որ եթե հայտով

ներկայացված հայտարարության գնահատման արդյունքում սույն ենթակետի պահանջների նկատմամբ արձանագրվում են անհամապատասխանություններ և ***մասնակիցը*** գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետում ***չի շտկում այն, ապա մասնակցի հայտը չի մերժվում*** և վերջինիս ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում կնքվող պայմանագրով չեն նախատեսվում գումարի փոխհատուցման հնարավորության պայմանները:

Վերոգրյալով պայմանավորված՝ գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ արձանագրելով, որ Ընկերության կողմից հայտով ներկայացված Հավելված N 1.1-ը՝ հայաստանյան ծագում ունեցող աշխատանքային և (կամ) արտադրական ռեսուրսների օգտագործման մասին հայտարարությամբ ներկայացված տեղեկությունը չի համապատասխանում ՀՀ կառավարության 01.04.2021թ. թիվ 442-Ն որոշմամբ սահմանված պայմաններին, այնուհետև Ընկերության կողմից սույն մասով շտկում չիրականացնելու հիմքով մերժելով վերջինիս հայտը, գործել է ՀՀ կառավարության 01.04.2021թ. թիվ 442-Ն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի ա) պարբերությամբ և Ընթացակարգի հրավերի 8-րդ կետի 8.26-րդ ենթակետով սահմանված պահանջների խախտմամբ, քանի որ վերը նշված կետերով հստակ սահմանվում է, որ Հավելված N 1.1-ի՝ հայաստանյան ծագում ունեցող աշխատանքային և (կամ) արտադրական ռեսուրսների օգտագործման մասին հայտարարության գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների չշտկումը հայտի մերժման հիմք չէ:

Անդրադառնալով գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված հետևյալ անհամապատասխանությանը՝ *առաջարկվող աշխատակազմի մասին տեղեկանքով ներկայացված մասնագետների մասին տեղեկատվությունը չի համապատասխանում կից ներկայացված մասնագետների որակավորումը հավաստող փաստաթղթերին, ինչպես նաև հրավերով սահմանված պահանջներին*, սույն մասով հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 2.4-րդ կետի 2-րդ ենթակետի ա), բ) և դ) պարբերությունների համաձայն՝ ***«Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝***

ա) պայմանագրի կատարման համար պահանջվող աշխատակազմը

	Որակավորում	Աշխատանքային փորձառություն

N	ը	Գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը	Ժամանակահատված
1	**Արտոնագրված ճարտարապետ***	բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների կապիտալ հիմնանորոգման աշխատանքների նախագծերի պատրաստման և ծախսերի գնահատման ծառայության մատուցում կամ աշխատանքի կատարում	Վերջին 3 տարվա ընթացքում 1 տարվա աշխատանքային մասնագիտական փորձ
4	**Տեխնիկ-էլեկտրիկի**	բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների կապիտալ հիմնանորոգման ոլորտում էլեկտրամատակարարման, էլեկտրալուսավորման, ներքին և արտաքին ցանցերի նախագծերի պատրաստման և ծախսերի գնահատման ծառայության մատուցում կամ աշխատանքի կատարում	Վերջին 3 տարվա ընթացքում 1 տարվա աշխատանքային մասնագիտական փորձ
5	**Ճարտարագետ**	բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների կապիտալ հիմնանորոգման ոլորտում ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցերի նախագծերի պատրաստման և ծախսերի գնահատման ծառայության մատուցում կամ աշխատանքի կատարում	Վերջին 3 տարվա ընթացքում 1 տարվա աշխատանքային մասնագիտական փորձ

բ) մասնակիցը որպես որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է պայմանագրի կատարման համար առաջարկվող աշխատակազմի վերաբերյալ տվյալները հետևյալ ձևով՝

Հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների				
անունը, ազգանունը	Որակավորումը	աշխատանքային փորձը		գործատուի անվանումը
		ժամանակահատվածը	գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը	
1	2	3	4	5

Ընթացակարգի հրավերի համաձայն՝ կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող աշխատակազմի մասին տեղեկանքը սահմանվել է հետևյալ տեսքով՝

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող աշխատակազմի մասին

N	Հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների				
	Անունը, Ազգանունը	Որակավորումը	Աշխատանքային փորձը		Գործատուի անվանումը
			Ժամանակա-հատվածը	Գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը	
1	*2*	*3*	*4*	*5*	*6*
1					
2					
3					
...					
...					

...)

դ) ***<u>Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է համապատասխանող, եթե վերջինս ապահովում է սույն պարբերությամբ նախատեսված պահանջները:</u>***

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընթացակարգի հրավերով պայմանագրի կատարման համար որպես պահանջվող աշխատակազմ նշվել է երեք մասնագետներ, իսկ Ընկերությունը հայտով կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող աշխատակազմի մասին տեղեկանքով ներկայացրել է 7 մասնագետների տվյալներ՝ անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի պատճեններով և արտոնագրի պատճեններով:

Այսպիսով՝ Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ*** ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ***ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:*** Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության

հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: ***<u>Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:</u>***

Ընդ որում՝ Կարգի 43-րդ կետով սահմանվում է, որ հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի ***<u>արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են արձանագրված անհամապատասխանությունները</u> և դրանցով պայմանավորված հայտերի մերժման հիմքերը:***

Վերոգրյալ իրավանորմերի մեկնաբանության և համադրված վերլուծության արդյունքում արձանագրում եմ, որ տվյալ դեպքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից չի պահպանվել Կարգի 41-րդ և 43-րդ կետերով սահմանված իմպերատիվ դրույթները, այն է՝ հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում Ընկերության կողմից ներկայացված կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող աշխատակազմի մասին տեղեկանքում արձանագրելով անհամապատասխանություն, հանձնաժողովի արձանագրության և Ընկերությանն ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն չի նկարագրել արձանագրված անհամապատասխանությունները, այն է՝ մանրամասն չի նկարագրել թե Ընկերության կողմից առաջարկվող աշխատակազմի մասին տեղեկանքով ներկայացված 7 մասնագետներից ում որակավորումը չի համապատասխանում կից ներկայացված մասնագետների որակավորումը հավաստող փաստաթղթերին, ինչպես նաև չի նկարագրել թե հրավերով սահմանված որ պահանջներին չի համապատասխանում և արդյունքում ինչ շտկում պետք է իրականացվեր Ընկերության կողմից, հետևաբար գտնում եմ, որ սույն մասով հնարավոր չէ արձանագրել հայտի մերժման իրավաչափությունը և որպես արդյունք գնման գործընթացի շրջանակում Ընկերության ստանձնած պարտավորության խախտման փաստը:

Այսպիսով՝ Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետով սահմանվում է, որ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է: Միաժամանակ գնումների գործընթացի կազմակերպման կարգը սահմանող ՀՀ կառավարության 05.04.2017թ. N 526-Ն որոշումը հստակ կարգավորում է գնման գործընթացի իրականացման կարգը՝ փուլ առ փուլ և ժամկետները:

Ընդ որում՝ համապատասխան կարգավորումներ նախատեսելն ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականություններից խուսափելուն և ժամանակին գործողություններն իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում ուղղված է իրավունքների և պարտականությունների իրագործմանը:

Անդրադառնալով գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված հաջորդ անհամապատասխանությանը՝ *աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները տրված են նախքան մրցույթի հրապարկվելը*, սույն մասով հարկ եմ համարում արձանագրել, որ Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 2.4-րդ կետի 2-րդ ենթակետի գ) պարբերությամբ սահմանվել է, որ ***աշխատանքային ռեսուրսների առկայությունը հիմնավորելու համար Մասնակիցը հայտով ներկայացնում է հրավերով սահմանված առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ մատուցվող ծառայություններում վերջիններիս ներգրավվելու մասին:***

Ուսումնասիրելով Ընկերության կողմից աշխատանքային ռեսուրսների առկայությունը հիմնավորելու համար հայտով ներկայացված առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ արձանագրում եմ, որ Ընկերության կողմից պահպանվել է Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 2.4-րդ կետի 2-րդ ենթակետի գ) պարբերությամբ սահմանված պահանջը, քանի որ համաձայնությունների մեջ հստակ նշված է սույն ընթացակարգի ծածկագիրը, որի շրջանակներում մատուցվող ծառայություններում վերջիններս համաձայնվել են ներգրավվել, ինչ վերաբերում է համաձայնությունները նախքան մրցույթի հրապարկվելը տրված լինելու հանգամանքին, ապա արձանագրում եմ, որ Ընթացակարգի հրավերով նման պահանջ թե համաձայնությունները երբ կարող էին տրվել սահմանված չէ, հետևաբար գտնում եմ, որ տվյալ դեպքում սույն մասով անհամապատասխանություն արձանագրելը, այնուհետև Ընկերության կողմից չշտկելու հիմքով մերժելը իրավաչափ չէ:

Անդրադառնալով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված հետևյալ անհամապատասխանությանը՝ *խախտված է 20.04.2020թ. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի հետ կնքված թիվ TPD-33 պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման ժամկետները, ինչը չի կարող գնահատվել որպես պատշաճ կատարված*, սույն մասով հարկ եմ համարում արձանագրել, որ ուսումնասիրելով Ընկերության կողմից Ընթացակարգի հրավերի 2.4-րդ կետի 1-ին ենթակետի բ) պարբերությամբ սահմանված «Մասնագիտական փորձառություն»

որակավորման չափանիշը հիմնավորելու համար ներկայացված նախկինում կատարած պայմանագրի սահմանված ժամկետում կատրված լինելու փաստը, արձանագրում եմ, որ համաձայն գործում առկա փաստաթղթերի Ընկերությունը որպես նախկինում կատարած պայմանագիր ներկայացրել է «Ինտերէներգիա» ՍՊԸ-ի և Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի միջև 20.04.2020թ. կնքված Վանաձորի թիվ 11 մանկապարտեզի վերակառուցման աշխատանքների համար անհրաժեշտ նախագծային աշխատանքների իրականացման թիվ TPD-33 պայմանագիրը, որի Հավելված Ա.-ով սահմանվում է, որ նախագիծը Խորդատուն պետք է ներկայացնի Պատվիրատուին ոչ ուշ 105 օրվա ընթացքում: Ավարտված նախագծի առկայության դեպքում (նախագիծը անկախ փորձաքննության է ներկայացնում Պատվիրատուն) վերջնական ընդունումը և հանձնման-ընդունման ակտի ձևակերպումը կկատարվի նախագծի վերաբերյալ փորձաքննության դրական եզրակացության դեպքում:

Սույն պայմանգրով ծառայության մատուցման ժամկետ է սահմանվել՝ 2020թ. ապրիլի 20-ից՝ 105 օր տևողությամբ կամ հետագայում կողմերի միջև գրավոր համաձայնեցված այլ ժամկետում:

Այս տեսանկյունից արձանագրում եմ, որ համաձայն գործում առկա «Ինտերէներգիա» ՍՊԸ-ի Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին ուղղված գրության՝ պայմանագրի շրջանակներում Վանաձորի թիվ 11 մանկապարտեզի վերակառուցման նախագիծը ներկայացվել է 22.07.2020թ.-ին, այսինքն՝ պայմանագրով սահմանված ժամկետում, որի հանձնման-ընդունումը կատարվել է Պատվիրատուի կողմից նախագիծն անկախ փորձաքննության ներկայացնելուց հետո: Ընդ որում պայմանագրի շրջանակներում կողմերի միջև կազմված հանձնման-ընդունման ակտի և հաշիվ վավերագրի (պայմանագրով սահմանված ծառայության ընդհանուր գնի չափով) առկայությամբ էլ փաստվում է նաև պայմանագրի պատշաճ կատարումը:

Ամփոփելով վերը նշված փաստերն ու փաստական հանգամանքները՝ գտնում եմ, որ «Ինտերէներգիա» ՍՊԸ-ի կողմից թույլ չի տրվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա չեն վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 12.07.2021թ. թիվ 26/26-1/11216-2021 գրությամբ «Ինտերէներգիա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**